ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՀՈՎԻՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРАГАЦОТН МАРЗ
ГЮХАПЕТАРАН ЦАХКАОВИТ

Հեռ. 0257 62406 բջջ. /093 700314/
N 17/27-17
«29» «ապրիլի» 2013թ.

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ՝ Ս. ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Կից ուղարկվում է Ծաղկահովիտ համայնքի ավագանու 22.04.2013թ. թիվ 2 հերթական նիստի որոշումը:

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ե. ԽԱՉԱՏՐՅԱՆ

30 04 2013թ.
Մուտք N 7/2104-13

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության
Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնք
Հոկտեմբերյան փ. 2 հեռ. +374 25762406

## ՈՐՈՇՈՒՄ

22 ապրիլի 2013 ԹՎԱԿԱՆԻ N 2/1

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՀՈՂԱՄԱՍ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Հիմք ընդունելով ՀՀ Տարածքային կառավարման նախարարի 23.03.2013 թվականի թիվ 01/16/1497-13 հանձնարարականը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի դրույթներով.*

## *ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ*

*1.«ՀՀ ԱՆ ՊՀՀ Արագածոտնի մարզային կենտրոն» ՊՈԱԿ Արագածի տարածքային հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության կողմից զբաղեցրած Ծաղկահովիտ համայնքի Շիրակացի փողոցի թիվ 3 հասցեում գտնվող 308.05 քմ մակերեսով պետական սեփականություն հանդիսացող շինությունը ծածկագիր՝ (014-008), նրա տակ գտնվող և սպասարկման համար հատկացված 0.2066 հա համայնքային սեփականություն բնակավայրի հողամասը հետ նվիրել Հայաստանի Հանրապետությանը:*

*Կողմ 4 Դեմ 0 Ձեռնպահ 0*

*Ս. Պողոսյան*
*Վ.Բեսալյան*
*Կ.Խաչատրյան*
*Ա.Ղազարյան*

*ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ե. ԽԱՉԱՏՐՅԱՆ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության
Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնք
Հոկտեմբերյան փ. 2 հեռ. +374 25762406

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 ապրիլի 2013 ԹՎԱԿԱՆԻ N 2/4

### ԾԱՂԿԱՀՈՎԻՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի դրույթներով Ծաղկահովիտ համայնքի գլխավոր հատակագծի և գոտիավորման սխեմային համապատասխան Հիմք ընդունելով Ծաղկահովիտի համայնքի ղեկավարի առաջարկությունը*

*ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝*

1. *Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի սեփականություն համարվող բնակավայրի նշանակության բնակության 0,0569 հա այլ հողը աճուրդ-վաճառքի միջոցով օտարել և հաստատել մեկնարկային գին տվյալ հողամասի կադաստրային արժեքի չափով 1քմ 222/երկու հարյուր քսան երկու/դրամ:*
2. *Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:*

*Կողմ 4 Դեմ 0 Ձեռնպահ 0*

*Ս. Պողոսյան*
*Վ.Բեսալյան*
*Կ.Խաչատրյան*
*Ա.Ղազարյան*

*ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ե. ԽԱՉԱՏՐՅԱՆ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության
Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնք
Հոկտեմբերյան փ. 2 հեռ. +374 25762406

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 ապրիլի 2013 ԹՎԱԿԱՆԻ N 2/2

*ԾԱՂԿԱՀՈՎԻՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ :*

*Համաձայն Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 14-րդ , 32-րդ հոդվածի 3-րդ կետերի պահանջների՝*

*ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝*

1. *Ստեղծել «Ծաղկահովիտի գյուղական համայնքի մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն:*
2. *Ծաղկահովիտի համայնքի ղեկավար պ-ն Ե. Խաչատրյանին սեղմ ժամկետում , սահմանված կարգով ապահովել նրան կանոնադրության հաստատումը, պետական գրանցումը և դրանից բխող բոլոր գործառույթների իրականացումը:*
3. *Համաձայնվել Ծաղկահովիտի գյուղապետի առաջարկությանը Ռուզաննա Տոնոյանին «Ծաղկահովիտի գյուղական համայնքի մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն նշանակելու մասին:*
4. *Ընդունել ի գիտություն, որ Ծաղկահովիտի գյուղական համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպության գործունեությունը ծավալվում է 2011թ օգոստոսի 9-ից:*
5. *Սույն որոշման կատարման հսկողությունը դնել գյուղապետ Ե. Խաչատրյանի վրա:*

*Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:*

*Կողմ 4 Դեմ 0 Ձեռնպահ 0*

*Ս. Պողոսյան*
*Վ.Բեսալյան*
*Կ.Խաչատրյան*
*Ա.Ղազարյան*

*ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ե. ԽԱՉԱՏՐՅԱՆ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության
Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնք
Հոկտեմբերյան փ. 2 հեռ. +374 25762406

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<u>22 ապրիլի 2013 ԹՎԱԿԱՆԻ N 2/3</u>

### ԾԱՂԿԱՀՈՎԻՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի, ՀՀ կառավարության 2006թ. հունիսի 22-ին Նո. 922-Ն որոշմամբ հաստատված խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրության 3-րդ բաժնի 7-րդ կետի պահանջներով, Հիմք ընդունելով Ծաղկահովիտի համայնքի առաջարկը*

*ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝*

*1. Հաստատել Ծաղկահովիտ համայնքի խնամակալության մարմին համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով հետևյալ կազմով՝*

1. *Ե. Խաչատրյան – համայնքի ղեկավար – նախագահ*
2. *Գ. Ասլանյան - աշխատակազմի քարտուղար - անդամ*
3. *Մ. Հարությունյան – Ծաղկահովիտի ԲԿ ՓԲԸ – ի մանկաբույժ - անդամ*
4. *Ե. Անտոնյան – Ծաղկահովիտի դպրոցի ուս. գծով տնօրենի տեղակալ- անդամ*
5. *Կ. Խաչատրյան- ավագանի -անդամ*
6. *Ս. Պողոսյան - ավագանի - անդամ*
7. *Գ. Դանիելյան - Արագածոտնի մարզպետարանի երեխաների պաշտպանության բաժնի վարիչ:*

*2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:*

*Կողմ 4 Դեմ 0 Ձեռնպահ 0*

*Ս. Պողոսյան*
*Վ.Բեսալյան*
*Կ.Խաչատրյան*
*Ա.Ղազարյան*

*ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *Ե. ԽԱՉԱՏՐՅԱՆ*